

նավահանգիստը, դեպի փարոսը, որ հետաքրքրական զուգադիպությամբ մը կկոչվի Արմեն, — հաճախ Փոքր-Ասիր տղոց տրված անուն մը:

Երբ տուն մտանք, Մովթաֆյան ինձ ըսալ.
— Օր մը, հուսամ, գոնե նկարներուս մեջ

իրարու հետ հաշտեցնել վերացական ու ձեւադրոշմ նկարիչները, որոնք իրար կդզեն, իրարու հետ կկալտին պարապ տեղը:

Այսպես խոսելով ան կբաժնվի ինձմեն, որովհետև ցայգային նոր ձկնորսության մը պետք է ներկա գտնվեր:

ՈՒՅՆԵ ՊԱՐՈՔ

(«Ժաղովուրդ» 8 հոկտեմբեր 1947 թ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՀՈՒՆԳԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

Մայիս 13-ին հրապարակագիր, Տօքթոր նակ Իվանի Զովթան (որ տասներկու տարիներ ապրած է Սովետական Միության մեջ) դասախոսություն մը տվավ Հունգար կոմունիստներու հավաքատեղիին մեջ՝ «Անձնական ազատությունը Սովետական Միության մեջ» նյութին շուրջ: Ստորագրյալս անձամբ շնորհակալություն հայտնեցի այդ պատվական հոմնգարացի դասախոսին, որ նախկին հորթիական բռնապետության ժամանակ, երբ Հունգարիո մեծամասնությունը թունդ թրքասեր էր, համարձակությունը ունեցած էր գիրք մը հրատարակելու հոմնգար լեզվով՝ «Օտար լեզերնեն մինչև Սովետական Միությունը խորագրով, որոն մեջ քողագիրծ ըրած էր թուրքին կեղծ գեմոկրասին, նամանավանդ հայոց թուրքերու կողմէ քաշած շարշարանքները պատկերացուցած էր»:

Երբ հարգելի դասախոսը իմացավ, որ հայ մըն է իրեն շնորհակալություն հայտնողը, իսկույն խոսք առնելով՝ ներկա գոնվող մոտ երկու հարյուր հունգարացիներու առաջ ըսկըսավ խոսիլ Եվրոպայի անցյալ դիմանագիտության մասին հայոց վերաբերյալ:

Հարգելի պարոնը սապես վերցացուց իր խոսքերը.

«Արևմտյան դրամատիրության պաշտպան

դիմանագիտությունը դեռ չէ բարեփոխված: Հուսախար շինինք երբեք: Եթե նրանք ուզեին օգնել հայ ժողովրդին, շատ տարիներ առաջ այդ զուսպներեն կազմատեին անոնք բայց նրանք այնպես գտած են, որ չօգնեցին հայ ժողովրդին: Անգիացիք ըսած են թե՝ չՄեր զրահավորները կարող չեն երբեք Արարատ լերան գագաթը բարձրանալ, որպեսզի կարողանայինք Հայաստանը ազատելու: Բայց կվստահացնեմ ձեզ, — ըսակ պ. դասախոսը, — եթե Արարատի գագաթը քարյուղի հանգեր գտնվեին, շատոնց հանած կինեին իրենց զրահավորները Արարատի գագաթը:

Այսօր սակայն, շնորհիվ Սովետական Միության, հայ ժողովուրդը ինքնորեն ու անկախ է և կհուսանք ու կսպասենք, որ երեկովան ստրոկ հայ ժողովուրդը վաղը իր թըշնամիեն հաշիվ պահանջե և ինք լուծե իր դատը, և ոչ մի անգամ այլևս արևմտյան դիմանագիտություն դուռը ծեծելու և ազատություն մուգալու ստիպված ըլլաւ:

Թողոր ներկաները ծափահարություններով իրենց գոհոնակությունը հայտնեցին հարգելի դասախոսին՝ տրված լուսաբանություններուն համար:

Հ. Ս. ՌԵՏՏՈՒՆԻ

(«Հայաստանյան ճակատ» 8 հունիս 1947 թ.)

